



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ  
ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔ**

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4**

07 ՄԱՅԻՍԻ 2020թվական

**ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ**

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Էմիլ Սարգսյանը, Գեղամ Վարդանյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

Համայնքի ղեկավարի օգնական Արմեն Ստեփանյանը, Գետափ բնակավայրի վարչական ղեկավար Լևոն Սաֆարյանը, Գլաձորի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ Նաիրի Հովհաննիսյանը և առաջատար մասնագետ Սամվել Օրդոյանը:

**Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արմեն Մովսիսյանը**

**Նիստն արձանագրում էր համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը**

Լսեցին.

**ԳԼԱԶՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 4 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ  
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Ձեկ. ԱՐՄԵՆ ՄՈՎՍԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի մայիսի 7-ի թիվ 4 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը.

1. Գլաձոր համայնքի ավագանու 2020 թվականի թիվ 4 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» դրամաշնորհային ծրագրով գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար համաձայնություն տալու մասին:

3. Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի խմելու ջրի արտաքային ցանցի չօգտագործվող խողովակաշարից ապամոնտաժելու և օգտագործելու համար թույլտվություն տալու մասին:

4. Ֆինանսական օգնություն տրամադրելու մասին:

5. Գլաձոր համայնքի ավագանու 2019 թվականի հոկտեմբերի 15-ի թիվ 84 որոշման բովանդակության մեջ փոփոխություններ կատարելու մասին:

6. Գլաձոր համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեում վերաբաշխում կատարելու մասին:

Կողմ-9	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 42/

Լսեցին.

**ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ, ԱՊԱԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՎ ԼԱՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» ԴՐԱՄԱՇՆՈՐՀԱՅԻՆ ԾՐԱԳՐՈՎ ԳՈՒՄԱՐ ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ԱՐՏԱԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

**/Զեկ. ՆԱԻՐԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 92-րդ հոդվածի 4-րդ մասի, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 9-րդ մասերի պահանջներով և հիմք ընդունելով Վայոց ձորի մարզպետի 2020 թվականի ապրիլի 15-ի N 01 /18.1/2572-2020 գրությունը՝

**ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Տալ համաձայնություն Եվրոպայի Խորհրդի «Ժողովրդավարական զարգացում, ապակենտրոնացում և լավ կառավարում Հայաստանում» ծրագրի շրջանակներում Գլաձոր համայնքի Գլաձոր բնակավայրում իրականացվելիք «Համայնքային տարածքների վերանորոգում կամ բարելավում» /համայնքապետարանի դահլիճ/ ծրագրով գումար ստանալու նպատակով արտաբյուջետային հաշիվ բացելու համար:

Կողմ-9	Դեմ-0	Ձեռնպահ-0
--------	-------	-----------